

<< Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ >>

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԱՍԲԻՈՆԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ՔՈԼԵԶԻ ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
_____ Վ. Է. ՆԵՐՍԻՍՅԱՆ

<<____>>_____ 2018թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2017-2018 ուստարի (տարեկան)

Ամբիոնի անվանումը՝

Լեզուների

Ամբիոնի պետ՝

նստիկանության գնդապետ Ա.Հայրապետյան

1. Ընդհանուր տեղեկություններ
ամբիոնի դասախոսական
կազմի վերաբերյալ

լեզուների ամբիոնին

ըստ հաստիքացուցակի հատկացված է՝ 5 հաստիք,
գրադված է 5

ամբիոնի պետ՝ ----- 1

դոցենտ՝ ----- 1

ավագ դասախոս՝ ----- 1

դասախոս՝ ----- 2

ընդամենը՝ ----- 5

Ներկա պահին ամբիոնը համալրված է՝ ամբիոնի պետ,նստ. գնդապետ Ա.Հայրապետյան

դոցենտ՝ նստ. գնդապետ Ռ.Մուսայելյան

ավագ դասախոս՝ նստ. մայոր Գ. Ռուսակովա

դասախոս՝ նստ. մայոր Ա. Եղոյան

նստ. ավ/լեյտենանտ Մ. Առաքելյան/հետծննդյան

արձակուրդ/

Պայմանագրային հիմունքներով՝ Յու. Դավթյան

Մ. Վարդանյան

Ռ. Ղուրբանյան

Ընդամենը՝ ----- 8.

2. Ընդհանուր տեղեկություններ
ամբիոնում դասավանդվող
առարկաների մասին

Համաձայն կրթահամալիրի ուսումնական պլանի՝ ամբիոնի
առարկայացանկում ընդգրկված են հետևյալ առարկաները՝

1. Հայոց լեզու

2.Հայոց լեզու և գրականություն

3.Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ

4.Ռուսաց լեզու

5.Օտար լեզու/անգլերեն/

6. Մասնագիտական օտար լեզու

Թվարկված առարկաներից 2017-2018 ուստարվա ընթացքում դասավանդվել են հետևյալ առարկաները՝

Ա.Հայրապետյան՝ Օտար լեզու/անգլերեն/
Մասնագիտական օտար լեզու

Ընդամենը 534 ժամ

Ռ.Մուսայելյան՝ Հայոց լեզու
Հայոց լեզու և գրականություն
Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ

Ընդամենը 482 ժամ

Գ.Ռուսակովա՝ Ռուսաց լեզու
Ընդամենը 618 ժամ

Ա. Եղոյան՝ Ռուսաց լեզու
Ընդամենը 492 ժամ

Մ. Առաքելյան՝ Օտար լեզու/անգլերեն /
Մասնագիտական օտար լեզու
Ընդամենը 222 ժամ

Յու. Դավթյան՝ Հայոց լեզու և գրականություն
Ընդամենը 298 ժամ

Մ.Վարդանյան՝ Օտար լեզու/անգլերեն/
Ընդամենը 271 ժամ

Ռ. Ղուրբանյան՝ Օտար լեզու/անգլերեն /
Ընդամենը 637 ժամ

3.Հաշվետու տվյալներ՝ Լեզուների ամբիոնի
պլանավորված ուսումնական 2017-2018 ուստարվա ընթացքում կատարած
ծանրաբեռնվածության և դրա ուսումնական բեռնվածությունը 3554 ժամ է:
փաստացի կատարման Պլանավորված ժամաքանակի բացթողումներ
վերաբերյալ չեն եղել:

4.Հաշվետու տվյալներ՝ Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են պլանավոր -
պլանավորված ված ուսումնամեթոդական բոլոր աշխատանքները՝
ուսումնամեթոդական 1.կազմվել են բոլոր առարկաների դասախոսությունների,
աշխատանքների գործնական պարապմունքների թեմատիկ պլաններն ու
կատարման վերաբերյալ ուսումնական ծրագրերը: Ուսումնառության որակի բարձրացման
նպատակով կազմվել են դասավանդվող առարկաների նոր առարկայական նկարագրեր:
Ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի կողմից կազմվել է նաև ասպիրանտուրայի
սովորողների համար առարկայական նկարագիր:

2.Ամբիոնի դասախոսների կողմից սահմանված ժամկետներում համապատասխանաբար
կազմվել են կիսամյակային քննությունների, ստուգարքների հարցաշարերն ու քննական
տոմսերը, որոնք քննարկվել և հավանության են արժանացել ամբիոնի հերթական նիստում:

3.Ամբիոնի պետի և դասախոսների կողմից անցկացվել են փոխադարձ դասալսումներ, և արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստերի ժամանակ:

4.Սովորողների հետ անցկացվել են նախաքննական կոնսուլտացիաներ:

5.Կազմվել են նոր դիդակտիկ նյութեր:

6.Նախապես կազմված ժամանակացույցի համաձայն՝ հրավիրվել են ամբիոնի նիստեր:

7.Անցկացվել են լրացուցիչ պարապմունքներ անբավարար գնահատական ստացած սովորողների հետ:

8.Հունիս, հուլիս ամիսներին անցկացվել են ստուգարքներ և քննություններ:

5.Տեղեկություններ դաստիարակ-

չական,կազմակերպչական և այլ

աշխատանքների վերաբերյալ

1. Սեպտեմբերի 1-ին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի կողմից կազմակերպվել է գիտելիքի օրվան նվիրված միջոցառում, որի ժամանակ ելույթի խոսքով հանդես են եկել առաջին և չորրորդ կուրսի սովորողները: Միջոցառմանը ներկայացվել են կրթահամալիրի դասախոսների կողմից հրատարակված գրքերը, ինչպես նաև անցկացվել է գրքի շնորհանդես:

2.Նոյեմբերի 9-ին ամբիոնի պետ, ուստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանը Ալիանս Ֆրանսեզ կազմակերպությունում Հայաստանում ֆրանսիական գրականության օրերի շրջանակներում մասնակցել է ֆրանսիացի հայտնի գրող, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Արնո Ռիկների հետ հանդիպմանը: Միջոցառումը կազմակերպվել էր 2018թ. Երևանում կայանալիք ֆրանկաֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթաժողովին ընդառաջ:

3.Նոյեմբերի 10-12-ը ամբիոնի պետ, ուստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանը մասնակցել է Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված մասնագիտական կատարելագործման դասընթացին և ստացել համապատասխան հավաստագիր: Դասընթացը վարել է հայտնի գրող, հրապարակախոս, մանկավարժ, անգլերեն դասավանդողների վերապատրաստման մասնագետ Ջերեմի Հարմերը:

4. Նոյեմբերի 10-ին ամբիոնի ավագ դասախոս, ուստիկանության մայոր Գ. Ռուսակովան երաժշտական կատարումներով մասնակցել է Սովետական միլիցայի տոնի առթիվ կազմակերպված միջոցառմանը:

5. Ուստիկանության գնդապետ Ռ. Մուլայեյանը կազմել է ուստիկանի գործունեության հետ առնչվող բառարաններ:

6. Ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի կողմից կազմվել են հայերեն-անգլերեն հարցաշար և քննական տոմսեր ՀՀ ուստիկանության անձնագրերի և վիզաների վարչության սահմանային անցման կետերի ծառայողների համար:

7. Ամբիոնի դասախոս Ա. Եղոյանի կողմից կազմվել են հայերեն-ռուսերեն հարցաշար և քննական տոմսեր ՀՀ ուստիկանության անձնագրերի և վիզաների վարչության սահմանային անցման կետերի ծառայողների համար:

8. Ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը և ամբիոնի դասախոս Ա. Եղոյանը անցկացրել են ՀՀ ուստիկանության անձնագրերի և վիզաների վարչության սահմանային անցման կետերի ծառայողների անգլերենի և ռուսերենի իմացության քննություն:

9. Ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը անցկացրել է լսողական և տեսողական դասընթաց ակադեմիայի մագիստրատուրայի սովորողների համար:

10. Ա. Հայրապետյանի կողմից մայիս ամսի սկզբից շաբաթը 2 անգամ անցկացվում են ֆրանսերեն լեզվի ֆակուլտատիվ պարապմունքներ: Պարապմունքներին ընդգրկված են 25 սովորողներ:

11. Ա. Հայրապետյանը սովորողներին մոտիվացնելու նպատակով հունիսի 11-ին ակադեմիայի առաջին կուրսի առաջին դասակի 2 սովորողի պարգևատրել է պատվոգրերով՝ անգլերենի դասերին բարձր առաջադիմություն ցուցաբերելու և անգլերենի իմացությունը կատարելագործելու համար:

12. Ա. Հայրապետյանը ակադեմիայի առաջին, երկրորդ, երրորդ կուրսերում անցկացրել է լսողական և տեսողական դասընթացներ:

13. Ա. Հայրապետյանը հունիսի 25-29-ը մասնակցել է «Ալիանս ֆրանսեզ» լեզվի և մշակույթի կողմից կազմակերպված ֆրանսերեն դասավանդողների կատարելագործման դասընթացներին: Հունիսի 28-ին ֆրանսիայի դեսպանատանը դեսպանի հրավերով մասնակցել է Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Ժոնաթան Լաբոթի կողմից կազմակերպված ընդունելիությանը՝ նվիրված Հայաստանում ֆրանսերենի դասավանդման կատարելագործմանը և ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովին:

14. Ամբիոնի պայմանագրային դասախոս Ռ. Ղուրբանյանը անցկացրել է լսողական և տեսողական դասընթացներ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի /վճարովի/ և քոլեջի սովորողների համար:

15. Ամբիոնի դոցենտ Ռ. Մուսայելյանը էլեկտրոնային տարբերակով կազմել է ՀՀ ոստիկանությունում հետաքննություն իրականացնելու իրավասություն ունեցող ծառայողների համար գործնական գրությունների կազմման ուղեցույց:

16. Ամբիոնի ավագ դասախոս Գ. Ռուսակովան գրականության համառուսական մրցույթում գրավել է մրցանակային առաջին տեղը և արժանացել կրծքանշանի:

17. Հունիս ամսին լեզուների ամբիոնի դասախոս Ա. Եղոյանի կողմից համակարգչային լսարանում կազմակերպվել է լսողական և տեսողական դասընթաց ակադեմիայի սովորողների համար:

18. Մայիս ամսին կրթահամալիրի մեթոդական խորհրդի կողմից երաշխավորվել է տպագրության ավագ դասախոս Գ. Ռուսակովայի Ռուսաց լեզվի դասագիրքը:

19. Հունիս ամսին Գ. Ռուսակովան մասնակցել է ոստիկանության կրթահամալիրում անցկացված «Ոստիկանության տեղը և դերը պետական կառավարման համակարգում» թեմայով միջազգային գիտագործնական համաժողովի գեղարվեստական մասի կազմակերպման աշխատանքներին:

20. Հուլիս ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը գրախոսել է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոսներ Մ. Յաղուբյանի, Ա. Խաչատրյանի, Լ. Մաղոյանի “English Grammar in Practice/Part III” դասագրքը, տվել դրական կարծիք և երաշխավորել տպագրության:

6. Հաշվետու տվյալներ 1. Սեպտեմբեր ամսին Ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի և պլանավորված գիտա- դասախոս Մ. Առաքելյանի հեղինակությամբ Խաչատուր հետազոտական Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

աշխատանքների և համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության դրանց փաստացի հիմնախնդիրներ» միջբուհական կոնսոցիուսի հանդեսում/ կատարման վերաբերյալ Միջբուհական կոնսոցիուսի գիտական հանդես, 2017թ., N 1, էջ 90-96/ տպագրվել է «Սոցիալական շփման բացակայության խնդիրը օտար լեզվի առցանց ուսուցման դեպքում» գիտական հոդվածը:

2. Հոկտեմբեր ամսին ամբիոնի դասախոս Մ. Առաքելյանի հեղինակությամբ «Մանկավարժական միտք» գիտական պարբերականում /էջ 58-64 Մանկավարժական միտք 2017, N 1-2,/ տպագրվել է «Մեդիակրթություն և մեդիագրագիտություն» գիտական հոդվածը:

3. Հոկտեմբեր ամսին ամբիոնի դասախոս, ուստիկանության ավագ լեյտենանտ Մ. Առաքելյանը տպագրել է «Մեդիատեխնոլոգիաների օգտագործման առկա վիճակը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» գիտական հոդվածը «Մխիթար Գոշ» գիտական հոդվածների ժողովածուում:

4. Նոյեմբեր ամսին ամբիոնի ավագ դասախոս, ուստիկանության մայոր Գ. Ռուսակովան մասնակցել է «Ռուսերենը՝ որպես 21-րդ դարի միջազգային և միջմշակութային հաղորդակցության երաշխիք» թեմայով գիտագործնական կոնֆերանսին:

5. Նոյեմբեր ամսին ամբիոնի ավագ դասախոս Գ. Ռուսակովան մասնակցել է «Ռուսերենը որպես 21-րդ դարի միջազգային և միջմշակութային հաղորդակցության երաշխիք» թեմայով գիտագործնական կոնֆերանսին:

6. Նոյեմբեր ամսին ամբիոնի դասախոս, ուստիկանության ավագ լեյտենանտ Մ. Առաքելյանը տպագրել է «ՏՀ տեխնոլոգիաների դիդակտիկական ներուժը» գիտական հոդվածը Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագրում:

7. Նոյեմբերի 6-ին ամբիոնի դասախոս, ուստիկանության ավագ լեյտենանտ Մ. Առաքելյանը ԱՄՆ-ի դեսպանանտանը մասնակցել է TOEFL քննությունը համակարգող ամերիկյան ETS կազմակերպության կողմից կազմակերպված “TOEFL Propell Workshop” մասնագիտական կատարելագործման աշխատաժողովին առաջատար խմբի կազմում (Advanced Level) և ստացել համապատասխան հավաստագիր:

8. Դեկտեմբեր ամսին ամբիոնի դասախոս Ա.Առաքելյանը Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագրում տպագրել է «ՏՀ տեխնոլոգիաների դիդակտիկական ներուժը» գիտական հոդվածը:

9. Դեկտեմբերին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի կողմից կազմակերպվել է «Կլոր սեղան» քննարկում “THE MAN WHO ESCAPED” դետեկտիվ պատմության շուրջ ՀՀ ուստիկանության կրթահամալիրի ակադեմիայի 3-րդ կուրսեցիների համար:

10. Հունվար ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի և պարսկերենի դասախոս Հ. Սողոմոնյանի կողմից հրատարակվել է «Հայերեն-պարսկերեն զրուցարան ուստիկանության ծառայողների համար» ուսումնական ձեռնակը:

11. Ապրիլ ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանի կողմից հրատարակվել է «Հայերեն-ֆրանսերեն զրուցարան ուստիկանության ծառայողների համար»: Սույն զրուցարանը նախատեսված է ՀՀ –ում կայանալիք ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի համար:

12. Ապրիլ ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը մասնակցել է ՀՀ պետական համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետի կողից կազմակերպված անգլերենի դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանը նվիրված կոնֆերանսին:

13. Մարտ ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը մասնակցել է «Մանմար» գրատան կողմից կազմակերպված անգլերեն դասավանդողների մեթոդիկայի կատարելագործման կոնֆերանսին:

14. Հունվար ամսին ամբիոնի պետ Ա. Հայրապետյանը առաջին կուրսի սովորողների հետ կազմակերպել է անցած դեղեկտիվ պատմվածքի վերաբերյալ կլոր սեղան քննարկում:

15. Մայիս ամսին ամբիոնի ավագ դասախոս Գ. Ռուսակովան մասնակցել է Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված Թուրքմենչայի պայմանագրի 190-ամյա հոբելյանին նվիրված միջազգային կոնֆերանսին:

7.Տեղեկություն ամբիոնում Լեզուների ամբիոնում

գործող բոլոր մասյանների գործում են հետևյալ մասյանները՝

գրանցումների վերաբերյալ 1.ամբիոնի նիստերի արձանագրությունների

2.դասալսումների արձանագրությունների

3.ամբիոնի ընթացիկ կոնսուլտացիաների

4.անբավարար գնահատական ստացած սովորողների հետ անցկացվող լրացուցիչ պարապմունքների

5.կրթահամալիրի աշխատակիցների հետ անգլերեն լեզվի դասընթացների

6. պարսկերեն լեզվի խմբակի

7. Անգլերենի ակումբի մասնակիցների

8. Ֆրանսերեն ֆակուլտատիվ պարապմունքների

Լեզուների ամբիոնի պետ,
ուստիկանության գնդապետ

Ա. Հայրապետյան

03. 09. 2018թ.